# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-38-35 norkharberd.ararat@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Հաստատել Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 9 նիստի օրակարգը:

2. Նոր Խարբերդ համայնքում 2019 թվականի տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին:

3. Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Նոր Խարբերդ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին:

5. Նոր Խարբերդ համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

6. Հողամասը օտարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 26-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է.***

Նոր Խարբերդ համայնքում 2019 թվականին սահմանել տեղական տուրքեր և վճարներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՌՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

*I. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2019 թվականին սահմանել տեղական տուրքերի հիմնային դրույքաչափերը՝ գոտիավորման սկզբունքով.*

Գոտիավորել Նոր Խարբերդ համայնքի վարչական տարածքը և գոտիավորման արդյունքում՝

ա/ Երևան-Արտաշատ խճուղին համարել I-ին գոտի/,

բ/ 1-ից մինչև 38 փողոցները համարել 2-րդ գոտի:

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝
հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ,
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ,
բբ/ 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ,
բգ/ 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ,
բդ/ 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,
դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

*1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

*1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:*

*1.4. Համայնքի վարչական տարածքի 2-րդ գոտում ոգելից և ալկոհոլային խմիչքի թույլտվության համար և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար 0.3 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝*

1/ ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ, 0.3 գործակցով՝ 2400 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ, 0.3 գործակցով՝ 3150 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.500 դրամ, 0.3 գործակցով՝ 4050 դրամ

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.500 դրամ, 0.3 գործակցով՝ 6150 դրամ

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.500 դրամ, 0.3 գործակցով՝ 7650 դրամ

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.500 դրամ, 0.3 գործակցով՝ 13.650 դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ, 0.3 գործակցով՝ 2400 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ, 0.3 գործակցով՝ 3150 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 13.500 դրամ, 0.3 գործակցով՝ 4050 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.500 դրամ, 0.3 գործակցով՝ 6150 դրամ

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.500 դրամ, 0.3 գործակցով՝ 7650 դրամ

գ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.500 դրամ, 0.3 գործակցով՝ 13.650 դրամ:

*1.5 Համայնքի վարչական տարածքի 1-ին գոտում 0.75 գործակցի կիրառմամբ սահմանել՝*

ա/ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 150.000 դրամ:

գ/ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 45.000 դրամ:

դ/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500 դրամ, 0.75 գործակցով՝ 1875 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ, 0.75 գործակցով՝ 5250 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ, 0.75 գործակցով՝ 11.250 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ, 0.75 գործակցով՝ 15.000 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ, 0.75 գործակցով՝ 18.750 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40.000 դրամ, 0.75 գործակցով՝ 30.000 դրամ:

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ՝ 0.75 գործակցով՝ 750 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ, 0.75 գործակցով՝ 1125 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ, 1875 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ, 0.75 գործակցով՝ 3750 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ, 0.75 գործակցով՝ 7500 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 17.000 դրամ, 0.75 գործակցով՝ 12750 դրամ:

*1.6. Համայնքի տարածքում՝ 1-ին գոտում գտնվող առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներ, բաղնիքներ/սաունաներ/, խաղատներ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ 0.75 գործակցի կիրառմամբ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ, 0.75 գործակցով՝ 18.750 դրամ
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ, 0.75 գործակցով՝ 37.500 դրամ
գ/ բաղնիքների / սաունաների/ համար՝200 000 դրամ, 0.75 գործակցով՝ 150,000 դրամ
դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ, 0.75 գործակցով՝ 375,000 դրամ
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ, 0.75 գործակցով՝ 187.500 դրամ
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ, 0.75 գործակցով՝ 75.000 դրամ:

1.7. Համայնքի տարածքի 1-ին գոտում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը 0.75 գործակցի կիրառմամբ սահմանել՝

ա/ ալկոհոլային խմիչքի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 դրամ, 0.75 գործակցով՝ 1500 դրամ,
բ/ թունդ ալկոհոլային /ալկոհոլի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.500 դրամ, 0.75 գործակցով՝ 2625 դրամ,
գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ, 0.75 գործակցով՝ 1125 դրամ
դ/դատարկ գովազդային վահանակների համար՝ այլ արտաքին գովազդի համար սահմանված գումարի 25%-տոկոսի չափով:

1.8 Հայաստանի Հանրապետության Նոր Խարբերդ անվանումը ֆիրմային անվանում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 դրամ, 0.75 գործակցով՝ 37.500 դրամ:

1.9 Համայնքի վարչական տարածքի 1-ին գոտում 0.3 գործակցի կիրառմամբ մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ սահմանել 3.000 դրամ:

1.10 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 500.000 դրամ:

1.11 Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝
ա/ 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 դրամ,
բ/ 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 դրամ,
գ/ 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 դրամ,
դ/ 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 դրամ:

*2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2019 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը*

2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմանները մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:
2.2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման

աշխատանքների համար համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.3. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

2.4. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարսահմանելհամայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ:

2.5. Համայնքում գտնվող ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար սահմանել ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինությունների մասով՝ մեկքառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ,

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

2.6. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.
ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,
բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

2.7 Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար սահմանել 5,000 դրամ:

2.8 Համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար սահմանել 3,000 դրամ:

2.9 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել 5.00 դրամ:

2.10. Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների ցանկ և գնացուցակ՝

1) Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,

2) Սննդօգնություն՝ թեթև միջամտություն 1000 դրամ, ծանր միջամտություն 5000 դրամ,

3) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝ մանր կենդանի 100 դրամ, խոշոր կենդանի 200 դրամ,

4) Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ,

5) Ախտահանություն՝ 1 քմ 200 դրամ,

6) Միջատազերծում՝ /դեզինֆեկցիա/ 1 քմ 100 դրամ,

7) Կրծողների ոչնչացում՝ (դեռատիզացիա) 1 քմ 200 դրամ,

8) Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ,

9) Կենդանու հերձում՝ մանր կենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 3000 դրամ,

10) Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ,

11) Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից մանր կենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 2000 դրամ,
12) Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2019թ. հուլիս ամիսը) մանր կենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 2000 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**


Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ (0236)6-00-35 norkharberd.ararat@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 01/17.2/7457-18 գրության համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի աշխատավարձը 310.000 /երեք հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

2.Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՒՄԱՍՅԱՆ ՄՒՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

Հավելված 1
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 26-ի N 27-Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 35

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 310.000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200.000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 130.000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 116.000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 204.000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/, /2.3-2/ | 2 | 195.000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/, /3.1-2/,/3.1-3/ | 3 | 140.000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/, /3.2-2/ | 2 | 130.000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/, /3.3-2/ | 2 | 120.000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Գործավար | 1 | 120.000 |
| Պահակ | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Հարկահավաք | 2 | 110.000 |

| ԳՐԱԴԱՐԱՆ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Տնօրեն | 1 | 110.000 |
| Գրադարանավար | 2 | 80.000 |

| ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ |
|---|

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 120.000 |
| Գեղարվեստական մասի ղեկավար | 1 | 100.000 |
| Հրահանգիչ | 2 | 80.000 |
| Կազմակերպիչ | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Բանվոր | 1 | 80.000 |

| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ /գյուղապետարանի պայմանագրային աշխատողներ/ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Բանվոր | 2 | 74.074 |
| Բանվոր | 1 | 79.000 |
| Ավտոբուսի վարորդ | 1 | 80.000 |
| Համայնքում ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների կազմակերպիչ | 1 | 120.000 |
| Համայնքը սպասարկող անասնաբույժ | 1 | 80.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հավելված 2
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 28-ի N 37-Ն որոշման

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| **Տնօրեն** | 1.0 | 165.000 |
| Դաստիարակ | 5.0 | 155.000 |
| Դաստիարակի օգնական | 4.4 | 85.000 |
| Երաժշտության դաստիարակ | 1 | 95.000 |
| Բուժքույր | 0.75 | 90.000 |
| Գործավար | 1 | 79.000 |
| Հաշվապահ | 1 | 110.000 |
| Տնտեսվար | 0.5 | 74.000 |
| Խոհարար | 1 | 115.000 |
| Խոհարարի օգնական | 1 | 74.000 |
| Լվացարար | 1.0 | 74.000 |
| Պահակ, օժանդակ բանվոր | 1.25 | 109.60 |
| Պահակ | 1.0 | 91.664 |
| Դռնապան | 1.0 | 74.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հավելված 3
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 28-ի N 37-Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| **Տնօրեն** | 1 | 120.000 |
| **Ուսմասվար** | 1 | 100.000 |
| Երաժշտության ուսուցիչ | 12 / 392.5 ժամ / | 1.308.320 |
| **Հաշվապահ** | 1 | 116.000 |
| **Հավաքարար** | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 78.000 |
| Պահակ | 1 | 78,000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ և 31-րդ հոդվածների պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2019 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թ. նոյեմբերի 26-ի N 28-Ն որոշման

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ» ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազ. դրամ

| ՀՀ | Եկամտատեսակները | |
|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ, այդ թվում | 197795.669 |
| | 1. Հարկեր և տուրքեր, այդ թվում | 31111.439 |
| 1/1 | Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | 5334.289 |
| | Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 2062.445 |
| | Ֆիզիկական անձանցից | 1797.995 |
| | Իրավաբանական անձանցից | 264.450 |
| | Հողի հարկ, այդ թվում՝ | 3271.844 |
| | Ֆիզիկական անձանցից | 3253.635 |
| | Իրավաբանական անձանցից | 18.209 |
| 1/2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 24000.000 |
| 1/3 | Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում | |
| | Տեղական տուրքեր, որից՝ | 1777.150 |
| | Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | 200.000 |
| | Հիմնական շինությունների համար | 200.000 |
| | Ոչ հիմնական շինությունների համար | |
| | Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն | 0.000 |
| | Շինությունների քանդման թույլտվություն | 5.000 |
| | Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 247,200 |
| | Ոգելից խմիչքների իրացման համար | 247,200 |
| | | |
| | Հանրային սննդի օբյեկտների համար | 75.000 |
| | Վառելիքի վաճառքի համար | 150.000 |
| | Տեխնիկական հեղուկների վաճառքի | 45.000 |
| | Ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու համար ,առևտրի կազմակերպում | 18,750 |
| | Արտաքին գովազդի համար | 729.000 |
| | Տաքսի ծառայության թույլտվության համար | 60,000 |
| 1/4 | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝ | |
| | Պետական տուրքեր, այդ թվում՝ | |
| | Ձագս | |
| | Նոտար | |
| 1/5 | Այլ հարկային եկամուտներ / տույժեր և տուգանքներ/ | |
| | 2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 145,656.5 |
| 2/5 | Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ | 145,656.5 |
| | Նպատակային հատկացումներ /սուբվենցիա/ | 0.0 |
| | Պետ. բյուջեից համայնքի վարչ. բյուջեին տրամադրվող այլ դոտացիա | 0.0 |
| | 3. Այլ եկամուտներ, այդ թվում | 21027.730 |
| 3/3 | Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ | 139.730 |
| | Հողերի վարձակալություն | 139.730 |
| | Այլ գույքի վարձակալություն | |
| 3/4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ | - |
| | Պատվիրակված լիազորություններ | - |
| 3/5 | Վարչական գանձումներ, այդ թվում | 20888,0 |
| | Տեղական վճարներ | 9705,0 |
| | Աճուրդին մասնակցելու համար | 10.0 |
| | Շին. ավարտը փաստագրելու համար | 15.0 |
| | Աղբահանության վճար | 9680.0 |
| 3/6 | Մանկապարտեզի ծնողական վճար | 7700.0 |
| 3/9 | Երաժշտական դպրոցի ծնողական վճար | 3483.0 |
| | Մուտքեր տույժերից տուգանքներից, այդ թվում | |
| | Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | |
| 3/10 | Վարչական իրավախախտումների համար | |
| 3/11 | 4.Վարչական բյուջեի մնացորդ որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը | |

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

| | ԾՐԱԳԻՐ | 1.1.1. | 1.3.3 | 1.6.1 | 4.2.1 | 4.5.1 | 5.1.1 | 6.4.1 | 7.3.1. | 8.1.1 | 8.2.1 | 8.2.3 | 8.2.4 | 9.1.1 | 9.3.1 | 9.4.1 | 9.5.1 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՈԴՎ ած | ԱՆՎԱՆՈՒՄ | գործ. մար. | այլ ծառ. | ընդ. բն. հ. | գյուղ. | ճան. տ. | աղբահ. | փող. լուս. | | հան. ծա. | գրադ. | մշ. տ. | այլ մշ. | մանկ. | ն.մ. կր. | բ.մ. կր. | երաժ. |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 35812.4 | | 2472.0 | | 1000.0 | 2300.0 | | | | 3240.0 | 9390.0 | | | | | |
| 4112 | Պարգևատրումներ | 400.0 | | | | | | | | | | | | | | | |
| 4211 | Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | | | 100.0 | | | | | | | | | | | | | |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 1500.0 | | | | | | 3000.0 | | | | 3000.0 | | | | | |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 35.0 | | | | | 9880.0 | | | | | 60.0 | | | | | |
| 4214 | Կապի ծառայություններ | 500.0 | | | | | | | | | | 120.0 | | | | | |
| 4221 | Ներքին գործուղումներ | 50.0 | | | | | | | | | | | | | | | |
| 4232 | Համակարգչային ծառայություններ | | 400.0 | | | | | | | | | | | | | | |
| 4233 | Աշխատակազմի մասն. զարգ. ծառ. | 200.0 | | | | | | | | | | | | | | | |
| 4234 | Տեղեկատվական ծառ. | 400.0 | | | 80.0 | | | | | | | | | | | | |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառ. | | | 200.0 | | | | 1000.0 | | | | | 1000.0 | | | | |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 500.0 | | 150.0 | 130.0 | | | | | | | 100.0 | | | | | |
| 4252 | Մեքենաների և սարք. ընթ. նորոգում և պահպանում | 400.0 | | | | | | | | | | | | | | | |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 400.0 | | | | | | | | | 50.0 | 50.0 | 100.0 | | | | |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 750.0 | | | 150.0 | | | | | | | | | | | | |
| 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 100.0 | | | | | | | | | 20.0 | 50.0 | 150.0 | | | | |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | | | | | 1000.0 | | 1000.0 | | 1000.0 | 20.0 | | 900.0 | | | | |
| 4511 | Սուբսիդիաներ ոչ ֆին. պետ. կազմ. | | | | | | | | | | | | | 30000.0 | | | 18620.0 |
| | Ծնողական վճար | | | | | | | | | | | | | 7315.0 | | | 3483.0 |
| 4726 | Հուղարկավորության նպաստներ բյուջեից | | | | | | | | | | | | | | | | |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | | | | | | | | 1520.0 | | | | | | 500.0 | 2000.0 | |
| 4819 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | | | 850.0 | | | | | | 70.0 | | | | | | | |
| 4823 | Պարտադիր վճարներ | 50.0 | | 200.0 | | | | | | | | | | | | | |
| 4891 | Պահուստային միջոցներ | | | | | | | | | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 41097.4 | 400.0 | 3972.0 | 310.0 | 2000.0 | 12180.0 | 5000.0 | 1520.0 | 1070.0 | 3330.0 | 12770.0 | 2150.0 | 37315.0 | 500.0 | 2000.0 | 22103.0 |

| 9.8.1 | 10.7.1 | 11.1.2. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| կրթու թ | սոց.ապ | պահ.ֆ | |
| | | | 54184.4 |
| | | | 400.0 |
| | | | 100.0 |
| | | | 7500.0 |
| | | | 9975.0 |
| | | | 620.0 |
| | | | 50.0 |
| | | | 400.0 |
| | | | 200.0 |
| | | | 460.0 |
| 450.0 | | | 2750.0 |
| | | | 680.0 |
| | | | 400.0 |
| | | | 600.0 |
| | | | 900.0 |
| | | | 320.0 |
| | | | 3020.0 |
| | | | 48620.0 |
| | | | 10796.0 |
| | 3000.0 | | 3000.0 |
| | 4000.0 | | 8000.0 |
| 400.0 | | | 1120.0 |
| | | | 250.0 |
| | | 42346.269 | 42346.27 |
| 850.0 | 7000.0 | 42346.269 | 197795.669 |

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե 40000.000 հազ.դրամ
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ, որն ուղղվում է ծախսերի ծածկմանը 2000.000հազ.դրամ
3. Վարչական բյուջեից / պահուստային ֆոնդից / կատարվող հատկացումներ —
4. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր

Ընդամենը եկամուտներ 42000.000 հազ.դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

հազ.դրամ

| N | Անվանումը | ՀՈԴՎԱԾ | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բաժին,խումբ,դաս | հոդված | գումարը | | | | |
| 1 | Վարչական սարքավորումներ | 1.1.1 | 5122 | 1240.000 | | | | 1240.0 |
| 2 | Վարչական սարքավորումներ | 8.2.3. | 5122 | 1000.000 | | | | 1000.0 |
| 3 | Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 1.6.1 | 5133 | 1000.000 | | | | 1000.0 |
| 4 | Նավթամթերք և բնական գազ | 4.3.2 | 5112 | 15000.000 | | | | 15000.0 |
| 5 | Նավթամթերք և բնական գազ | 4.3.2 | 5134 | 300.000 | | | | 300.0 |
| 6 | Ճանապարհային տրանսպորտ | 4.5.1 | 5113 | 22000.000 | | | | 22000.0 |
| 7 | Ճանապարհային տրանսպորտ | 4.5.1. | 5134 | 440.000 | | | | 440.0 |
| 8 | Փ ո ղ ո ց ա յ ի ն լ ու ս ա վ ո ր ու թ յ ու ն | 6.4.1. | 5113 | 1000.000 | | | | 1000.0 |
| 9 | Փ ո ղ ո ց ա յ ի ն լ ու ս ա վ ո ր ու թ յ ու ն | 6.4.1. | 5134 | 20.0 | | | | 20.0 |
| | Ընդամենը | | | | | | | 42000.0 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29-Ն

### ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով համայնքի ավագանին *որոշում է՝*

Նոր Խարբերդ համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի։

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 26-ի N29-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Վարչական բյուջեի 11.01.02 «Համայնքների պահուստային ֆոնդ» ծրագրի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 810.0 հազար դրամ, այն ուղղելով. վարչական բյուջեի՝
ա/ 1.1.1 «Օրենսդիր և գործադիր մարմին» ծրագրի 4234 /տեղեկատվական ծառայություններ/ հոդվածին՝ 30.0 հազար դրամ,
բ/ 4.2.1 «Գյուղատնտեսություն» ծրագրի 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածին՝ 20.0 հազար դրամ,
գ/ 6.4.1 «Արտաքին լուսավորության ցանցի հիմնավերանորոգում» ծրագրի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին՝ 360.0 հազար դրամ, 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածին՝ 400.0 հազար դրամ:

2. Վարչական բյուջեի եկամտային մասում որպես «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» ավելացնել 175.100 հազար դրամ, այն ուղղելով 9.5.1 «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի 4511 /սուբսիդիա/ հոդվածին 175.100 հազար դրամ:

3.Ֆոնդային բյուջեի 4.3.2 «Նավթամթերք և բնական գազ» ծրագրի 5112 /շենք և շինությունների կառուցում/ հոդվածից պակասեցնել՝ 370.000 հազար դրամ,
4.5.1 «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում» ծրագրի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածից պակասեցնել 420.0 հազար դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածից պակասեցնել՝ 180.0 հազար դրամ,
դրանք ուղղելով ֆոնդային բյուջեի 6.4.1. «Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում» ծրագրի 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին՝ 950.000 հազար դրամ: 6.4.1. «Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում» ծրագրի 5134 / նախագծահետազոտական ծախսեր / հոդվածին՝ 20.000 հազար դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, 023616-00-20 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30**

ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ **հոդվածի**, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով,Նոր Խարբերդ **համայնքի** գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով **համայնքի ղեկավարի** առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ-վաճառքի **միջոցով** օտարել և հաստատել **մեկնարկային** գին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել **համայնքի** ղեկավարին հողամասը օտարելու աճուրդը կազմակերպել մինչև 2019 թվականի մարտ ամիսը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 30 որոշման

# ԱՂՅՈՒՍԱԿ

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0230-0050 | 5.72982 | գյուղատնտեսական | 5-րդ կարգի վարելահող | — | 2091.385 | չկա |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ